Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոֆ. Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

ԿՈՎՆ ԱՌԱՆՑ ՀՈՐԹԻ ԿԹԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

636
Ե-67

ԳԵՏԳՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

ՊՐՈՖ. Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

30 JUL 2010

636
Ե-67

ԿՈՎՆ ԱՌԱՆՑ ՀՈՐԹԻ ԿԹԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈԼԵԿՏԻՎ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

ԲՄԱՅԵ

21.161

11 APR 2013

(4624-53)
33666-62

Հրատարակ. № 1830
Գլավլիտ № 6749 (բ) Գասվեր № 4949 Տիրաժ 10.000

Պետքրատի տպարան, Երևան

1. ԻՆՉՈՒ ԱՌԱՆՑ ՀՈՐԹԻ ԿԹԵԼԸ ՊԵՏՔ Է ԿՈԼԵԿՏԻՎ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԴԱՌՆԱ

Մեր գյուղացիությունը կարծում է, վոր իր տեղական կովերն առանց հորթի չեն կթվի, կաթ կպահեն կրծի մեջ լեվ մի որ էլ բոլորովին կը ցամաքեն։

Այդ կարծիքը բոլորովին սխալ է յեվ անհիմն։ Մարդիկ իրենք են սովորեցրել կովին հորթով կթվել, յեվ մոռացել են, վոր կովը հորթով կթելու ամբողջ մեղքն իրենց վրա լե ընկնում և վոչ թե կովի։

Ինչպես սկզբից սովորեցրել են կովին, այնպես էլ նա կթվում է։

Փաստն այն է, վոր մեր գյուղացիությունը, իր կովերը հորթով է կթում, հորթերին կաթ է տալիս ծծեցնելով։

Պարզ է, վոր յերբեք չեմ խմեցա, թե

ինչքան կաթ է ծծում հորթը, արդյոք այդ ծծածը նրան բավարարում է, թե վոչ. կամ շատ չի՞ նրա պահանջի համեմատ։

Եթե հորթը քիչ է ծծում, ուրեմն նա չի կարող լավ զարգանալ լեվ լավ արդյունավետ կենդանի դառնալ, իսկ յեթե շատ է ծծում, ուրեմն կաթն իզուր տեղը կորչում է լեվ վնաս է հասցնում տնտեսությանը։

Մյուս կողմից եվ հայտնի յե, թե վորքան մեծ աշխատանք և չարչարանք է պահանջում հորթով կթելը։ Մեկ կամ յերկու կով ունեցողի համար դա նկատելի չէ, բայց յերբ տնտեսությունը մեծ է, կովերն ու հորթերը շատ են, ինչպես կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում, ուղղակի անտանելի կացություն է ստեղծվում։ Հորթեր բերելը, մոր մոտ պահելը, լեվ տանելը՝ մեծ աշխատանք, չարչարանք և ավելորդ ծախք է պահանջում։

Հենց այդ պատճառով կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների համար հորթով կթելը հանդուրժելի չէ։ Բոլոր կոլեկտիվ տնտեսությունները պետք է անպայման ձգտեն իրենց կովերը կթել առանց

հորթի և հորթերը կաթով կերակրեն, չափով, նորմայով, այսինքն այնքան տան, վորչափ հարկավոր է նրանց կանոնավոր զարգացման համար։

Դա հարկավոր է նաև կովերի կաթնատվության չափը վորոշելու, կովերին ճիշտ գնահատելու, կաթի յեվ կերի հաշվետվությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար։ Իսկ հայտնի յե, վոր առանց ճշգրիտ հաշվետվության սոցիալիստական տնտեսությունն կազմակերպելն անհնարին է։

Ահա թե ինչն է պատճառը, վոր կովերին առանց հորթի կթելու խնդիրը խոշոր նշանակություն և ստանում կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների համար, և ահա թե ինչու դրանք առանձնապես պետք է հոգ տանեն կովերն առանց հորթի կթելու վրա։

Սակայն դա միայն խնդրի մի կողմն է, շատ կարևոր է այն հարցը, թե հորթերի առողջության զարգացման համար վորն է ավելի բարենպաստ պայմանը հանդիսանում՝ ծծեցնելը, թե կաթը ամանից խմացնելը։

Այդ հարցին նվիրված է հաջորդ գրքույքը։

2. ԿԱԹ ԽՄՈՑՆԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ դլխից հետևում է, որ լեթե մենք ուզում ենք հորթին նորմալով կամ չափով կաթ տալ, պետք է անպայման կաթը կթենք, կշռենք և ինչքան հարկավոր է այնքան էլ տանք, որ ծծեցնելու միջոցով մենք չենք կարող մեր ցանկացած քանակությամբ կաթ տալ հորթին։ Ցեվ դրա համար անհրաժեշտ է նախ և առաջ վերացնել ծծեցնելը, և հորթերին կաթ տալ խմացնելով, որովհետև դրա առավելությունները շատ են և բազմակողմանի։ Այդ ձևով, ինչպես ասված է արդեն, հնարավոր է լինում հորթին այնքան կաթ տալ, որքան պահանջում է նրա աճումն ու զարգացումը, ուրիշ խոսքով հնարավոր է լինում ռացիոնալ կերպով կերակրել հորթերին կաթնային շրջանում, կանոնավորել հորթի կաթնային սնունդը մեր ցանկության համաձայն։ Սա ամենագլխավոր առավելությունն է, որ ունի առանց հորթի կթելը՝ հորթով կթելու հանդեպ և ամանից կաթ խմացնելը՝ ծծեցնելու հանդեպ։ Բայց սրանից բացի կան և

մի շարք այլ առավելություններ, որ կապված են առանց հորթի կթելու հետ, և որը մենք բերում ենք ներքևում.

1. Ցերը հորթին կաթը ամանից ենք խմացնում, հնարավոր է լինում անպատ կաթի մի մասը, իսկ հետո լել ամբողջը փոխարինել ավելի եժան, քաշած կաթով։

Ծծեցնելու դեպքում այդ հնարավոր չէ։

2. Ցերը հորթի մայրը հիվանդանում է, որի հետևանքով հնարավոր չի լինում հորթին ծծեցնելը, ծծելու սովոր հորթերը դժվարությամբ են սովորում կաթ խմել ամանից և մինչև սովորելը տուժում են։ Նույնը պատահում է յեվ կովի սատկելու դեպքում։

3. Կաթ խմացնելը և դրա հետ կապված շփումը մարդու հետ հորթին ավելի ընտանեցնում է և հեղ ընավորություն է զարգացնում նրա մեջ։

4. Ծծելու դեպքում կաթի վերջին, ամենայուղալի մասը հորթին է մնում, որի կարիքն այնքան էլ մեծ չէ հորթի համար, բայց անտեսությունն իզուր տեղը տուժում է։

5. Ցեթը մոր կաթը յուղալի չէ, և տնտեսական նկատառումներով այդ կաթը ցանկալի չէ հորթին տալ, կաթ խմացնելու դեպքում, հորթին կարող են տալ ուրիշ կովերի կաթ, իսկ ծծեցնելու դեպքում ստիպված ենք յուղալի կաթը տալ հորթին։

6. Նկատի ունենալով, որ հորթերին անհրաժեշտ չէ յուղալի կաթ տալ, որ հորթերի համար բավական է այնպիսի կաթ, որ 3—3,5% յուղ ունենա, կարելի է հորթերին խմացնելու համար ընտրել այնպիսի կովերի կաթ, որոնց այդքան յուղալիություն չունի և որոնց կաթի յուղի գնդիկները մանր են, ու հեշտ կարող են յուրացվել հորթերի կողմից։ Կարելի է նույնպես սերզատով անցկացնել կաթը, ջրիկացնել և այնպես տալ հորթին։ Հասկանալի է միանգամայն, որ ծծեցնելու դեպքում այդ բարելավումներն անհնարին է կատարել։

7. Կաթ խմացնելու դեպքում հորթին կաթ է տրվում 2—3 ամիս այն էլ կաթնատվության սկզբում, երբ կաթը ջրալի է լինում։ Ծծեցնելու դեպքում հորթը ծծում է մինչև մոր ցամաքելն, այսինքն կաթնատվության ամենայուղալի շրջանների կաթը։ Հորթի համար դա կարևոր չէ, իսկ տնտեսության համար մեծ կորուստ է։ Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները պետք է այս նուրբ հանգամանքներն էլ հաշվի առնեն։

8. Կոլտնտեսությունները հորթերին պետք է առանձին պահեն և մեծացնեն։ 4—5 ամսական դառնալուց հետո ամառները ցանկալի է մոտակա շրջաններից տանել սարը, որովհետև սարում նրանք ավելի լավ են աճում և զարգանում, քան ցածր տեղերում։ Ծծեցնելու դեպքում այդ հնարավոր չէ այն բազմաթիվ դեպքերում, երբ կովերին պահում են գյուղերում կամ ցածր տեղերում, և բարձր սար չեն տանում։

9. Ամանից խմացնելը վերացնում է այն ավելորդ աշխատանքը, որ կապված է ծծեցնելու հետ, այսինքն կարիք չի լինում հորթին բերել մոր մոտ, ծծեցնել, սկզբում կապել վոտներից կթելուց առաջ, բաց թողնել, որ կթելուց հետո ծծի, հետո նորից առանձնացնել կովից, տանել հորթատոց, և այլն։ Խոշոր խորհրդային

տնտեսություններում այդ հանդուրժել չի կարելի։

10. Հաճախ տնտեսության համար պլանով չի նախատեսվում հորթերին պահելը, մեծացնելը, ինչպես որինակ քաղաքներ վայրերում, վորտեղ կաթը հատկացվում է ամբողջովին ազգաբնակչության կարիքներին։ Այդպիսի դեպքերում ավելի նպատակահարմար է հորթերն ուղարկել քաղաքից հեռու հատուկ կոլեկտիվ կամ խորհրդային տնտեսություն, վորտեղ հորթերին ճանեցնում և պահում են։ Սակայն յեթե կովերը հորթով են կթվում, այդ տանել չի կարելի, վորովհետև կովերը կարող են ցամաքել։

11. Ծծեցնելու դեպքում, հորթերն ընկնում են ուրիշ կովերի տակ, ջղայնացնում են դրանց, ջղայնացնում և ցավեր են պատճառում և իրենց մայրերին, մանավանդ յերբ հորթերը սոված են, իսկ պտուկներում կաթ չկա, և հորթերն ստիպված են լինում տնխնա քաշել պտուկներից և դնչերով հարվածներ տալ կովերի գատարկ կրծին։

12. Ծծեցնելու դեպքում, յերբ հորթը

սառկում է, կովերը հաճախ թույլ չեն տալիս կթելու, կաթը պակսեցնում են կամ ցամաքում են, թեև այս դեպքում զանազան միջոցների յեն դիմում, (աղ են տալիս, հորթի կաշին ուրիշ հորթի վրա լեն փռում, կաշվից խրատիլակ են շինում, և այլն) բայց այդ միջոցները շատ անգամ չեն ազնում։ Խմացնելու ժամանակ այդ բարդությունները տեղի չեն ունենում։

13, Ծծեցնելու միջոցով կովերը սովորում են կաթ վերաքաշել, կրծի մեջ պահել հորթի համար և այդպիսի կովերին շատ դժվար է լինում ցամաք կթել, այսինքն կթել մինչև կաթի վերջին կաթիլը, և վերջը հորթին մեծ բաժին է ընկնում, նույնիսկ հորթի մեծ հասակում, յերբ նրան կաթ հարկավոր չէ տալ։ Իսկ յերբ կովերը առանց հորթի լեն կթվում, նրանք սովորաբար կաթ չեն պահում և կաթը վերաքաշող կովերը հազվադյուտ են լինում։

14. Ծծեցնելու դեպքում հարկադրված են լինում հորթերին ծծեցնել մինչև կովի ցամաքելը, այսինքն մինչև 6—7 ամսական հասակը։ Վորոշ դիտողություններ հիմք են

ծառայում յենթադրելու, վոր այդպիսի հորթերը չոր կերի շրջանում՝ 4—7 ամիս հասակում ախորժակով չեն արածում, և ախորժակով խոտ և այլ չոր կեր չեն ուտում, յեթե այդ հասակում կաթ են խմում կամ ծծում են։ Այդպիսի հորթերը կանոնավոր չեն զարգանում և շուտ չեն սովորում կոպիտ կերը լավ ոգտագործել, իսկ մենք գիտենք, վոր կենդանիները պետք է կոպիտ կեր ոգտագործելու լավ կարողություններ ձեռք բերեն, վորպեսզի կարողանան կանոնավոր զարգանալ ու արդյունաբերել։ Խմացնելը հնարավորություն է տալիս ժամանակին կտրել կաթից և հարկադրել սովորելու արոտին և կոպիտ կերին, ծծեցնելը այդ հնարավորությունը չի տալիս։

Ահա վորքան առավելություններ ունի կոշտ առանց հորթի կթելը։ Բացի նրանից, վոր դրանով միանգամայն ապահովվում է հորթերի ռացիոնալ կերակրումը չահել հասակում, այդ ձևը թեթևացնում է աշխատանքը և տնտեսության համար մեծ հարմարություններ է ստեղծում։ Մանավանդ անհրաժեշտ է այդ ձևի կիրառումը խոշոր

խոշորդային տնասնապահական և կոլեկտիվ տնտեսություններում, ուր շատ կովեր են պահում, և վորտեղ հորթերին ծծեցնելն ուղղակի դժբախտություն է տնտեսության համար։ Ուրեմն կոլեկտիվ և խոշորդային տնտեսությունները պետք է անվերապահորեն կոշտ առանց հորթի կթելուն անցնեն և հորթերը կաթով կերակրեն, խմացնելով ամանից։

3. ԿԱԹՆ ԱՄԱՆԻՑ ԽՄԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

Յերբ մենք առաջարկում ենք կովերն առանց հորթի կթել, և հորթին կաթ խմացնել ամանից, ապա մենք չենք մոռանում, վոր յեթե հորթերին կաթ խմացնելու վորոշ կանոնները ճշտությամբ չկատարվեն, հորթերը դրանից կարող են վնասվել։

Վորոնք են այդ կանոնները։

1. Ամանները պետք է ամեն անգամ կաթ տալուց առաջ տաք, յեռացրած ջրով լվանալ, իսկ կաթ տալուց հետո տաք սոդաջրով լվանալ, վոգոդել յեռացրած ջրով, սրբել, մաքուր ջրով և պահել բերանն ի

վեր մաքուր անդում, վոր վոչ ճանճ նստի վրեն և վոչ էլ փոշի։

Այդ անհրաժեշտ է ճշտությամբ ու անշեղորեն կատարել, վորպեսզի հորթերը չվարակվեն և չհիվանդանան։ Ամանի մաքրությունը հորթի առողջության առաջի պայմանն է։ Եթե տնտեսության մեջ շոգեկաթսա կա, ապա ամանները պետք է շոգիով լվանալ։ Դա սխտահանության և ամանները մաքուր պահելու ամենալավագույն միջոցն է։

2. Կաթ տվողն ամեն անգամ պետք է իր ձեռքերը սապոնով լվանա և ապա կաթ խմացնի հորթերին։

3. Հորթերին տրվելիք կաթը պետք է պահել սոդայով լվացած միանգամայն մաքուր և փակ ամանի մեջ, սառը տեղում, առանձին մաքուր շենքում, կաթնատանը, վոր պետք է ամեն մի խորհրդային և կոլտնտեսություն ուներ։ Գոմում կաթ չպիտի պահել։

4. Խմացնելուց առաջ սառը կաթը անհրաժեշտ է տաքացնել մինչև 33—34 աստիճան Ցելսիուսի ջերմաչափով, այսինքն այնքան, ինչքան ջերմություն ունի նոր կթած կաթը և այնպես տալ հորթերին։

5. Առաջին տասը որում ցանկալի և լավ է մոր կաթ խմացնել հորթին, հետո կարելի յե խմացնել և ուրիշ կովերի կաթը կամ հատկապես դրա համար ընտրած կովերի կաթից։

6. Եթե բոլոր կովերը առողջ են, և կասկածելի կով չկա, կարելի յե կաթը հում տալ բոլոր հորթերին, միայն պետք է գոլացնել յեթե արդեն սառել է։ Հիվանդ կովերի կաթը հորթերին չպետք է տալ։

Ավելի նպատակահարմարն այն է՝ ինչպես նկատել ենք վերև, վոր կովերից ջոկվեն միանգամայն առողջները կաթի յուղի ցածր տոկոսով, և յուղի փոքր գնդիկներով և մշտապես դրանց կաթը խմացնել բոլոր հորթերին։ Լավ է կթելուց հետո անմիջապես տալ, հակառակ դեպքում հարկավոր է տաքացնել, յեթե սառել է։

Սառը կաթը հորթերին յերբեք չպիտի տալ։

7. Ցերեսը քաշած կամ սերվատով ապակարած կաթը խմացնելու դեպքում

հարկավոր է այդ կաթը տաքացնել մինչև 80—90 աստ. Ցելս. պոլացնել և ապա տալ հորթերին խմելու։

8. Կաթը բոլոր հորթերին պետք է տալ անհատական նորմայով, այսինքն՝ յուրաքանչյուրին իր պահանջի չափ։

9 Կաթ խմացնելուց հետո անհրաժեշտ է հորթի դունչը սրբել մաքուր շորով։

10. Կաթի ամբողջ նորման պետք է տալ օրական 3—4 անգամ։ Խմելիս, չպետք թույլ տալ, որ հորթը միանգամից ագահաբար խմի, այլ ընդհատումներով, քիչ-քիչ։

Սրանք հորթերին առողջ վիճակում պահելու գլխավոր պայմաններն են։ Եթե այս պայմանները ճշտիվ կատարվեն, և պետք է անպայման կատարվեն մեր տնտեսություններում, այդ դեպքում խմացնելը բացառական հետևանք չի ունենա։

4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՆՈՐԱԾԻՆ ՀՈՐԹԻՆ ԿԱԹԸ ԽՄԵԼԸ ՑԵՎ, ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿԱԹ ՏԱԼԸ

Ցերը ծնելուց հետո կովը մի քանի ժամ հանգստացել է, կթում են առաջին կաթը, որը դալ է կոչվում, տալիս են հորթին խմելու։

3624-57 33666-62

Նոր դիրք դալը պետք է ածել մի ժամքուր, լավ լվացված ամանի մեջ և ձեռքերը սապոնով մաքուր լվանալ, մատը մտցնել կաթի մեջ, իսկ հորթի դունչը մոտեցնել կաթին և մատը կաթի միջից գնել հորթի բերանը։ Հորթը ընազդորեն սկսում է մատը ծծել և ծծելով կաթը խմել։ Ցերբեմն հարկավոր է մատը բերանից հանել, որպեսզի հորթը հետագետ սովորի խմել և առանց մատի։ Այդպես անելով մի յերկուորից հետո հորթն արդեն սովորում է ամանից խմել առանց ոգնության։ Պետք է ամանը շատ մաքուր պահվի, հակառակ դեպքում հորթը կարող է ամանից վարակվել։

Արտասահմանում գործ են ածում պտուկավոր կաթնամաններ հորթին կաթ ծծեցնելու համար։

Պտուկավոր կաթնամանները նպատակահարմար չեն։ Նրանք համեմատաբար բարդ կառուցվածք ունեն, պտուկները հաճախ փչանում են և վերջապես դրանց մաքուր պահելն ավելի դժվար է, քան հասարակ դուլյերը։ Այդ պատճառով էլ հասարակ ապիտակ թիթեղից կամ ցինկից շինված

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

գործ դուլերն այդ նպատակի համար բավական հարմար են։

Մեծ կոլեկտիվներում և խորհրդային տնտեսություններում, որտեղ տասնյակ և հարյուրավոր հորթեր են կերակրվում, կաթ տալու տեխնիկան պետք է պարզեցնել և հեշտացնել, բայց այնպես, որ միաժամանակ ապահովվի հորթերի առողջապահությունը։

Առաջին պայմանը — հարմար հորթատունն է, որ պետք է անպայման ունենան բոլոր տնտեսությունները։

Երկրորդ պայմանն՝ այդ հարմար և անհրաժեշտ քանակությամբ ամաններն են։

Իմ կարծիքով — 3—4 լիտրանոց դուլերը սպիտակ թիթեղից հարմար պիտի ճանաչվեն։ Լավ կը լինի, եթե դուլերի քանակը հավասար լինի հորթերի քանակին։ Այս դեպքում կարելի է կաթը ընդհանուր կաթսայից միանգամից բաժանել հորթերին, որոնք կխմեն միաժամանակ և չեն ջղայնանա։ Աշխատանքն էլ արագ կընթանա և կաթը չի սառչի։ Սակայն սրա հետ կապված են մի շարք այլ անհարմարություններ, որոնք խոշոր տնտեսություններում հաղիվ հնարավորություն տան և նպատակահարմար ճանաչվի հորթերի քանակի չափ դուլեր ունենալ։ Այդ պատճառով պետք է բավականանալ քիչ դուլերով։ Բեռ դուլերի քիչ լինելու դեպքում աշխատանքը յերկար է տևում և կաթ խմացնելը բոլոր հորթերին միաժամանակ չի կատարվում և հորթերն անհանգստանում են։ Դուլերի պակաս լինելու դեպքում՝ յուրաքանչյուր խումբը խմելուց հետո անհրաժեշտ է դուլերը տաք ջրով վողողել, իսկ յեթե շոգեկաթսա կա, շոգիով կեծացնել, որպեսզի հորթերը միմյանցից չվարակվեն, և ապա նույն դուլերով խմացնել հաջորդ խմբերին։

Կաթ տալու աշխատանքի կանոնավոր կազմակերպումը կախված է և շենքի հարմարությունից։

Տնտեսությունը պետք է հարմար առանձին հորթատուն ունենա գոմին կից, հորթերը պետք է առանձին վանդակներում պահվեն, յուրաքանչյուրի համար լավ է ունենալ մի վանդակ։ Վանդակները պետք է դասա-

վորված լինեն շարքով։ Մի հորթանոցում կարող է լինել մի քանի շարք վանդակներ։ Անցքերը կարելի է դասավորել հորթանոցի լերկարությամբ։ Սակայն շարքերը պետք է իրարից այնքան հեռու լինեն, վորպեսզի նրանց արանքում կարելի լինի աշխատանք կատարել, կաթ բերել դրսից խմացնել, հորթերը տանել բերել և այլն. միջանցքի մեկ և կես մետր լայնությունը միանգամայն բավական է դրա համար։ Յուրաքանչյուր վանդակ պետք է մի դուռ ունենա. դռան կողքին ճաղերից մեկը պետք է ներքևում շարժական լինի, վորպեսզի դույլով կաթ տալու ժամանակ կարելի լինի այդ ճաղի ներքին ծայրը մի կողմի վրա թեքել ու բաց անել ճեղքվածք և ճեղքվածքի առաջ դնել կաթը դույլով։ Այդ ճեղքվածքի միջից հորթը գլուխը դուրս է հանում և ճեղքվածքի առաջ դրած դույլից կաթ խմում։

Կարելի չէ և ճաղերի վրա դրսից հարմարություն ստեղծել դույլը կախ անելու համար։ Այդ դեպքում դույլի մի կողմը պետք է ուղիղ լինի տախտակին կպցնելու համար։

Պետք է ամեն կերպ աշխատել այնպես կազմակերպել խմացնելը, վոր կարիք չլինի ամեն անգամ վանդակների դռները բանալ և ներսը տալ կաթը, այլ կաթը տրվի դրսից, միջանցքից։ Դա շատ հեշտացնում է աշխատանքը։

Հորթերը պետք է խմբերի բաժանվեն, ըստ հասակի և կերակրման շրջանի և միատեսակ կեր ստացողները իրար մոտ լինեն դասավորված, աշխատանքը լավ կազմակերպելու նպատակով։

5. ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԽԱՄԱԾԻՆ ԿՈՎԻՆ ԿԹՎԵԼ, ԱՌԱՆՑ ՀՈՐԹԻ

Խամածին համարվում է այն կովը, վորն առաջին անգամն է ծնում։ Դրանց շատ հեշտ է առանց հորթի կթել. դրա համար հարկավոր է անմիջապես ծնելուց հետո հորթը հեռացնել մորից և բոլորովին ցույց չտալ մորը։ Իսկ կովին հարկավոր է 3—4 ժամից հետո կթել։ Սովորաբար խամածին կովերը ծննդաբերական ցավերը թուլանալուց հետո հեշտությամբ կթվում են առանց հորթի։

Բայց պատահում են և այնպիսիները, որոնք ջղայնանում են և սկզբում թույլ չեն տալիս կթելու։ Դրա վրա չպետք է ուշադրություն դարձնել և համառորեն պետք է աշխատել մի կերպ կթել։ Լավ պիտի հիշել, որ առաջին կիթը վորոշիչ նշանակություն ունի ապագայի համար։ Ինչպես կովը առաջին անգամ կսովորի, այնպես էլ նա կկթվի և հետագայում։ Կովի վրա չպիտի բարկանալ կամ ծեծել, այլ պետք է մեղմ վարվել նրա հետ։ Վոչ մի առանձին միջոցի չպիտի դիմել կովին հանգստացնելու կամ ուշադրությունը ցրելու համար և այլն, վորովհետև դրանք սովորություն կդառնան կովի համար և ապագայում միշտ էլ ստիպված կլինեք նույն բաները կրկնել, վորպեսզի կարողանաք կթել։ Այդ սովորությունները հորթի դերը կխաղան և կխանգարեն աշխատանքի ռացիոնալացմանը։ Այդ սովորությունները կդառնան կաթ վերքաշելու և պահելու պատճառ։ Այնպես վոր պետք է ամեն կերպ աշխատել խամածին կովերին հենց սկզբից կթել առանց վորևէ ուժանդակ միջոցների։ Այդ միջոցները

չատ են։ Վոմանք կեր են տալիս, մյուսները՝ աղ, շատերն առաջը կանգնում են, բռնում վիզը և քորում, և այլն։ Այդ բոլորն ավելորդ են և չպիտի անել, այլ ուղղակի պիտի նստել ու կթել։

Մեղմ, հանգիստ, բայց համարձակ վերաբերմունքը վերջի վերջո հաղթահարում է կովին և կովը թույլ է տալիս, վոր իրեն կթեն։ Եթե սկզբում շատ է ջղայնանում, պետք է սպասել, վոր կովը հանգստանա, սպասել կարելի է մինչև 5—6 ժամ, նույնիսկ ավել։ Այդքան սպասելուց վոչ կովը կտուժի, և վոչ հորթը։

Պետք է հիշել, վոր մեր տեղական ջղային խամածին կովերը շատ անգամ հրաժարվում են կթվելուց և հորթի ներկայությամբ, այնպես վոր չպիտի կարծել, վոր ամեն մի ջղայնություն և ընդդիմադրություն անպայման հորթի բացակայության հետևանք է։

Շատ անգամ խամածին կովերը «աշմարդ» են անում, այսինքն իրենց հորթին չեն ընդունում։ Այդպիսի կովերին ջուր հելտ է կթել առանց հորթի, միայն կար-

կավոր է, վոր կովի ցավերը թեթևանան։

Ծնելուց հետո պետք է աշխատել խաղաղ կովերին վոչ մի հորթ ցույց չտալ, նույնիսկ ոտար հորթեր, այլ պետք է այնպես պահել դրանց, վոր գոնե 3—4 շաբաթ բոլորովին հորթ չտեսանեն, հորթերի ձայնը չլսեն։ Այդ անհրաժեշտ է նրա համար, վոր կովերը յերբեմն բնազդորեն սկսում են հորթի կարոտը քաշել և լսելով նրանց ձայնը կամ տեսնելով նրանց՝ հորթի ներկայության մեծ պահանջ են զգում, այնպես վոր վորքան ուշ տեսնեն նրանք հորթերը, այնքան լավ։ Հորթով կթվող կովերին սկզբնական շրջանում պետք է դրանցից հեռու պահել. 3—4 շաբթից հետո այդ անհրաժեշտությունն, իհարկե վերանում է։

Հաջորդ տարիները պետք է վարվել դարձյալ այնպես, ինչպես առաջին տարին։

Ամեն անգամ կթելիս, կովը պետք է միանգամից ցամաք կթել, վոր բոլորովին կաթ չմնա կրծում։ Ցերբեք չպետք է կրկնակիթ անել, վորովհետև կովը սովորում է կրկնակիթին, և կաթ է պահում, մեկ անգամից ցամաք և լրիվ չի կթվում. դրանից

է առաջանում յերկրորդ, յերրորդ անգամ յեռացնելու պահանջը։

Յեթե կովը հենց սկզբից սովորի մեկ անգամից լրիվ կթվել, նա միշտ էլ առավելագույն կթիթը կտա և կարիք չի լինի կրկնակիթ անել կամ յերկրորդ անգամ յեռացնել՝ ավելի մեծ քանակությամբ կաթ ստանալու նպատակով։ Կաթ պահելը սովորության արդյունք է և վոչ թե կովի բնածին հատկություն։

6. ԻՆՉՊԻՍԻ՞ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ԲԱԶՄԱԾԻՆ ԿՈՎԵՐԸ ՀՈՐԹՈՎ ԿԹԵԼ Ի ՆԿԱՏՄԱՄԲ

Պետք է ասել, վոր յեթե բոլոր խաղաղ կովերը նման են իրար այն տեսակետից, վոր դեռ վոչ մի բանի չեն ընտելացած և նոր է, վոր պիտի սովորեն ու ընտելանան, ապա բազմածինները արդեն վորոշ բաների սովոր և ընտելացած կենդանիներ են և այդ տեսակետից, նայած թե յուրաքանչյուրն ինչպես է սովոր, իրարից զատ բանով տարբերվում են։

Մեր կատարած փորձերը ցույց են

ավել, վոր հորթով կթվող բաղմածին կովերին ըստ նրանց սովորությունների, կարելի լի բաժանել հետևյալ խմբերի.—

Առաջին խումբը. — Նրանք են, վորոնց յերը ուղենանք կարող ենք կթել առանց հորթի և վորոնք կաթը վեր չեն քաշում, չեն պահում։

Յերկրորդ խումբը. — Նրանք են, վորոնք թեկեվ թույլ են տալիս առանց հորթի կթելու, բայց կաթը վեր են քաշում, պահում են, լեթե հորթը ներկա չե կթելու ժամանակ, ըստ վորում, վոմանք կաթը պահում են կթելուց առաջ, վոմանք ել կթելուց հետո։

Յերրորդ խումբը. — Նրանք, վորոնք առանց հորթի ներկայության թույլ չեն տալիս կթելու, կթողին մոտ չեն թողնում, հորթը պետք ե անպայման ներկա լինի, վորպեսզի կովը հանդիստ կթվի, թույլ տա կթողին կթելու։

Իբրև մեր կատարած փորձերի հետևվանք, պետք ե ասել, վոր 2-րդ և 3-րդ խմբերի կովերը յեռ են գալիս, այսինքն տրամադրվում են կթվել, յերբ կթելու ժամանակ հորթերը ներկա չեն լինում միայն կթվելու տրամադրություն առեղծելու համար ծծելը կարելի չե, դրանք առանց ծծելու ել կարող են կթվել, միայն թե հորթը ներկա լինի։ Դա վերաբերում ե նույնիսկ ամենաչար և անհաշտ ու առանց հորթի չկթվող բոլոր կովերին։ Ուրեմն կարելի չե ծծել չե, այլ լոկ հորթի ներկայությունը։

Չորրորդ խումբը. — Նրանք են, վորոնք սովոր են կրկնակի թի, այսինքն վորոնք սովոր են ընդհատումներով կթվել և 2—3 անգամ յեռ գալ։ Սրանք կաթ են պահում անկախ նրանից, թե հորթերը կթի սկզբին ծծում են, լեռցնում են կովին թե չե։ Հորթերը կարող են հենց սկզբից ել ներկա լինել։ Կթողները այդ դեպքում նույնիսկ ստիպված են լինում դադարեցնել կթելը, նորից բաց են թողնում հորթին, վոր մոր պտուկները շոշափի, նորից կաթ բաց թողնելու համար։ Փորձերը թեև ցույց են ավել, վոր կարելի չե գրեթե նույն գրգիռն առաջացնել առանց հորթը ծծեցնելու, լեթե հորթին բաց ենք թողնում, մոտեցնում կո-

մի կրծին, քայց թույլ չենք տալիս, վոր պառուկները շոշափի, այլ պառուկները շոշափում է կթողը, բայց, ինչպես յերևվում է, հորթի ծծելու դեպքում կովը ավելի լավ և ավելի շուտ և յեռ գալիս, քան յերբ զրզռում է կթողն իր ձեռքերով, հորթի ներկայությամբ։

Ինչպես յերևվում է հորթի և կթողի առաջացրած զրզռումներն այլ կերպ են ընդունվում կովի կողմից։

Այստեղից պարզ է միանգամայն, վոր բոլոր կովերին կամ վերեվում բերած բոլոր խմբերին միատեսակ մոտեցում չի կարելի ունենալ, վոր ամեն մեկի համար պետք է կթելու առանձին ձեվ մշակել, հիմնական և գլխավոր նպատակ ունենալով՝ բոլորին ել կթել առանց ծծեցնելու, վորովհետև հորթին ռացիոնալ ձեվով կարելի յե կերակրել կաթով միայն այն դեպքում, յերբ նա ծծելով չի անվում, այլ խմելով։

Ստորև տալիս ենք, թե ինչպես պետք է վարվել յուրաքանչյուր խմբի հետ այդ նպատակին հասնելու համար։

7. ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԲԱԶՄԱԾԻՆ ԿՈՎԵՐԻՆ՝ ԿԹՎԵԼ ԱՌԱՆՑ ԾԾԵՑՆԵԼՈՒ

Ամենից առաջ պետք է բոլոր բազմածին կովերին ստուգել, իմանալու համար թե յուրաքանչյուրը վոր խմբին է պատկանում։

Ցերբ արդեն հայտնի յե, թե տվյալ կովը վոր խմբին է պատկանում, դժվար չի հատուկ ձև կիրառել նրան կթելու առանց ծծեցնելու։

1-ին խումբ.—Ամենացանկալի խումբն առաջին խումբն է։ Հենց վոր պարզվեց, վոր կովը հորթի բացակայությամբ, առանց նկատելի տրտունջների կթվում է և կաթը չի պահում վոչ կթթի սկզբում, վոչ ել վերջը՝ այդպիսի կովը կամ կովերը հարկավոր է շարունակել կթել հենց այդպես, հորթի խաղաղ բացակայությամբ։

2-րդ խումբ.—Դրանք խաղաղ, հեզ բնավորության կովերն են, թույլ են տալիս, վոր կթողը մոտենա ու կթի, բայց վատ են սովորած՝ յեթե հորթը ներկա չի

լինում՝ կաթը պահում են, կամ կիթի սկզբում կամ վերջը։

Վերջերդի այդ կովերը կարդին կթվեն և կաթ չպահեն, հարկավոր է հորթերին բերել նրանց մոտ և պահել մոտը, վոր կովերը կարողանան հոտոտել և լիզել իրենց հորթին, բայց թույլ չպիտի տալ, վոր հորթը մոտենա կրծին և ծծի մորը վոչ կթելուց առաջ և վոչ էլ կթելուց հետո։ Հորթին կովի մոտ պահելու փոխարեն լավ է հորթին կապել կովի առաջին վոտներից, ինչպես այդ ընդունված է մեր գյուղերում։ Այդ դեպքում կարիք չի լինի, վոր հորթը կովի մոտ պահելու համար մի առանձին մարդ զբաղվի։ Վոտից կապելու դեպքում մի բանվոր կարող է սպասարկել մի քանի կթողի և ստիպված չի լինի կանգնել մի տեղ, այլ մեկի հորթը կբերի կկապի, իսկ մյուսինը կտանի։

Այդ կովերն առանց ծծեցնելու միանգամայն ցամաք կթվում են և կաթ չեն պահում, չեթե միայն հորթերը ներկա չեն լինում կթելու ժամանակ։ Այսպիսի կովեր

շատ են պատահում մեր տեղական առվարի նախրի մեջ։

3-րդ խումբ. — Սրանք, ինչպես առված և վերիվում, չոր, ջղային կովեր են, վորոնց թիվը նույնպես քիչ չէ մեր տավարի մեջ։ Սրանք կթողին մոտ չեն թողնում կամ քաջի լեռ տալիս, թույլ չեն տալիս, վոր կթողը մոտենա և կթի, չեթե հորթը բացակայում է կթելու ժամանակ։ Բայց հենց վոր հորթը դալիս է մոր մոտ, իսկույն խաղաղվում են և թույլ են տալիս, վոր կթեն ու մինչդամայն ցամաք կթվում են։ Այսպիսի կովերը հարկավոր է կթել՝ հորթը կովի մոտ բերելով, ճիշտ այնպես, ինչպես և 2-րդ խմբի կովերին. սրանց նկատմամբ նույնպես թույլ չպիտի տալ, վոր հորթը ծծի կթելուց առաջ և հետո։ Կթելուց հետո անմիջապես հորթը պետք է հեռացնել և առանձին կիթ տալ։ Սրանց մեջ պատահում են թե կաթ պահողներ և թե առանց կաթ պահելու կթվողներ։

Ցերկրորդ և յերրորդ խմբերը լավ կթվում են, յերբ հորթերը ներկա չեն լինում կթելու պահին։

4-րդ խումբ. — Սրանք ընդհատումներով կթվող, 2—3 անգամ յուր լեկող կովեր են։ Սրանք կարող են թե խաղաղ և թե չար բնավորություն ունենալ։ Սրանք կարող են կթվել և հորթի բացակայությամբ, բայց մաքուր չեն կթվի։ Սրանք մաքուր կթվելու համար բավական չեն, վոր հորթը ներկա լի, արհրաժեշտ է նաև, վոր առաջին անգամ կաթը կտրվելուց հետո հորթը նորից շոշափի բերանով պտուկները և ինչպես ասում են դյուղացիք — յերկրորդ անգամ յուր բերի։ այդպիսի կովերին պետք է սկսել կթել առանց թույլ տալու, վոր հորթը ծծի կթի սկզբում։ Բայց հենց վոր կաթը կտրվեց, պետք է թույլ տալ, վոր հորթը պտուկները ծծի և կաթը վրա գալիս՝ իսկույն հորթին պետք է մի կողմ քաշել և նորից ցամաք կթել։

Կարելի յի, իհարկե, թույլ չտալ, վոր հորթը շոշափի ծծի պտուկները, կարելի յի միայն դունչը մոտեցնել պտուկներին, բայց պտուկները շոշափել և կոպիտ մաժել ձեռներով։ Կթողի շնորհքից է կախված,—կհաջողվի հորթի պես գրգռել կուրծը, թե վոչ։

Այդ խումբն ամենանոցանկալի խումբն է և իհարկե վորքան քիչ լինեն նրանք նախրում, այնքան լավ։

8. ՄԻ ՀՈՐԹՈՎ ՄԻ ՔԱՆՔ ԿՈՎ ԿԹԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցերը հորթով կթելն անխուսափելի յե, պետք է աշխատել ռացիոնալացնել կովերը կթելը, վոր նախ քիչ աշխատանք պահանջվի և յերկրորդ հորթերի սնունդը կանոնավոր, նորմայով տարվի։ Վորքան քիչ թվով հորթ ոգտագործվի կթելու ընթացքում, այնքան կթեթևանա աշխատանքը։ Փորձը ցույց է տվել, վոր մի հորթով հնարավոր է լինում մի քանի կով (4—6) կթել (հերթով)։ Այն տնտեսություններում, վորտեղ հորթերը չեն աճեցնում, դա մեծ չափով հնարավորություն է տալիս կրճատել տնտեսության մեջ կովերը կթելու նպատակով պահվելիք հորթերի քանակը։

Մի հորթով մի քանի կով կթելու ձևը պետք է կիրառել մեր բոլոր խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում։

Ծերը կովը ծնում և, առանձնացնում են հորթին, վոր կովը չտեսնի, և նրա փոխարեն բերում են կովի մոտ մի ուրիշ մեծացած հորթ։ Սակայն առաջուց այդ հորթի մաշկը քսում են ընդերքի լորձունքով, վոր կովը հոտից ընդունի նրան։ Այդպիսով կարելի յե մի քանի կով (4—6 և ավել) մի հորթով կթել։ Այդ ունի և այն առավելությունները, սովորական հորթով կթելու հանդեպ, վոր միևնույն հորթը մի կովից անցնում է մյուսին և կարիք չի լինում մեկին տանել, մյուսին բերել։ այդ շատ հեշտացնում է աշխատանքը։ Ինարկի վոչ մի դեպքում թույլ չպիտի տալ հորթին ծծելու, այլ հարկավոր է միայն պահել կովի մոտ ու այնպես կթել։

ՑԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մեր սոցիալիստական անասնապահության նպատակներից մեկը պետք է լինի կովերը կթել առանց հորթի և հորթերին կաթով կերակրել՝ խնայելու միջոցով։

2. Անխտիր բոլոր խամաճիներին հենց սկզբից կթել առանց հորթի։

3. Բազմաճին կովերի մեջ պետք է կատարել ստուգիչ ընտրություն, պարզելու համար, թե դրանցից վորն է հեշտությամբ առանց հորթի կթվում և վորն է կթվելու ժամանակ պահանջում հորթի ներկայությունը։ Վերջիններին կթելու համար չպիտի հորթը ծծեցնել, այլ միայն պետք է պահել կովի մոտ։

4. Այնտեղ, ուր անխուսափելի յե հորթով կթելը, պետք է անպայման կիրառել մի հորթով մի քանի կով կթելու միջոցը, անխտիր բոլոր անասնությունները։

[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0295821

21.161

ՓՐՅԸ 5 ԿՈՊ. (1 Լ.)

Проф. Х. ЕРИЦЬЯН

НЕОБХОДИМОСТЬ ДОЕНИЯ КОРОВЫ БЕЗ ТЕЛЕНКА

Руководство для колхозов и совхозов

Госиздат ССР Армении
Эривань—1981